ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 ապրիլի շաբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

44
(3253)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

10 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ԵՎ ՄՈՏ 11 ՄԼՆ ԴՐԱՄ ԵԿԱՄՈՒՏ

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Սյունիքի մարզպետի տեղակալ Հայկ Հարությունյանի՝ 2024 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագիրը եւ պարզել, թե ինչ ունեցվածքով է նա զբաղեցրել պաշտոնը եւ ինչ փոփոխություններ են արձանագրվել նրա ֆինանսական վիճակում ներկա դրությամբ:

Հայկ Հարությունյանը Սյունիքի մարզպետի տեղակալի պաշտոնն ստանձնել է 2022 թվականի ապրիլի 1-ից:

Հայտարարագրի համաձայն՝ նա ունի ընդհանուր առմամբ շուրջ 10 միավոր անշարժ գույք, որոնց մեջ ընդգրկված են հողամասեր եւ բնակարաններ Սյունիքի մարզի Կապան համայնքի տարբեր հասցեներում: Դրանց մի մասը համատեղ սեփականություն է, իսկ մի մասը՝ բաժնային կամ միանձնյա սեփականություն:

Բացի անշարժ գույքից՝ պաշտոնյան ունի նաեւ տրանսպորտային միջոց՝ 2008 թվականի արտադրության MAZDA մակնիշի ավտոմեքենա, որը ձեռք է բերվել 2020 թվականին:

Ֆինանսական հատվածում հայտարարագրում նշվում է շուրջ 1.2 մլն դրամ կանխիկ միջոց եւ տարբեր բանկային հաշիվներում ընդհանուր հաշվով շուրջ 1 մլն դրամից ավելի մնացորդ: Միաժամանակ առկա են նաեւ վարկային պարտավորություններ՝ մոտ 3.5 մլն դրամ մնացորդով:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում



«Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցում են, որ ՀՀ բարձր տեխնոլոգիաների նախարար Մխիթար Հայրապետյանին իշխանությունները դիտարկում են Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի պաշտոնում «գործուղելու» տարբերակով: Ըստ նույն աղբյուրների՝ իշխանությունները փորձում են ֆեդերացիա ուղարկել մի անձի, որը կկարողանա փրկել խորացող ճգնաժամային իրավիճակը հայկական ֆուտբոլում: Այս ֆոնին առավել արդիական է դառնում հարցը՝ ո՞վ է այսօր ղեկավարում ՀՖՖ-ն եւ ինչո՞ւ նրա շուրջ դժգոհությունը չի մարում: Այս պահին Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան ղեկավարում է Արմեն Մելիքբեկյանը, որն այդ պաշտոնում է 2019 թվականից: Նա վերընտրվել է նաեւ 2023 թվականին՝ չնայած աճող քննադատություններին, ինչը ավելի է խորացրել անվստահության մթնոլորտը ֆուտբոլային շրջանակներում: Հայաստանի ազգային հավաքականի խաղը շարունակում է հիասթափեցնել երկրպագուներին: Տարիների ընթացքում շոշափելի առաջընթաց չի արձանագրվել, իսկ պարտությունները դարձել են սովորական երեւույթ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Սուրբ Աննա եկեղեցում վարչապետ Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ տեղի ունեցած միջադեպի ականատեսների հարցաքննելու համար քննչական կոմիտե միջնորդություններ են նախապատրաստվում: Ի՞նչ որոշում կկայացնի կոմիտեն, վերոնշյալ օրը եկեղեցում գտնվող մոտ 5 տասնյակ քաղաքացիներին կկանչե՞ն հարցաքննության եւ հատկապես այն անձանց, որոնք ինքնակամ հայտարարել են, որ հարցաքննեն իրենց. կհետեւենք քննության ընթացքին: Հիշեցնենք, որ Սուրբ Աննա եկեղեցում Ծաղկազարդի պատարագի ընթացքում վարչապետը շքախմբով մտել էր ներս, գրավել ներկաների ուշադրությունը, ինչից դժգոհել էին ներկաները: Դավիթ Մինասյանը, նայելով Նիկոլ Փաշինյանին, ասել էր «տենց չնայես», ու սկսվել էր քաշքշուկը: Ոստիկանները բիրտ ուժով բերման էին ենթարկել Դավիթ եւ Միքայել Մինասյան եղբայրներին, ինչպես նաեւ Հայ ազգային ճակատի հիմնադիր, քաղաքական գործիչ Գեւորգ Գեւորգյանին: 18-ամյա Դավիթ Մինասյանը դատավոր Մնացական Մարտիրոսյանի որոշմամբ 2 ամսով կալանավորվել է: Գործով նախաքննությունը շարունակվում է: Նախորդ օրը հայտնի դարձավ, որ բժշկական հետազոտությունների արդյունքում 18-ամյա Դավիթ Մինասյանի մոտ հաստատվել է փակ գանգուղեղային տրավմա, ուղեղի ցնցում:

Ավարտվել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության հերթական համագումարը, որի ընթացքում Գագիկ Ծառուկյանը միաձայն վերընտրվել է կուսակցության նախագահի պաշտոնում: Համագումարը նաեւ հաստատել է առաջիկա խորհրդարանական ընտրություններին ԲՀԿ ընտրական ցուցակի առաջին երեք տասնյակ թեկնածուներին՝ 1. Ծառուկյան Գագիկ, 2. Թեւանյան Անդրանիկ, 3. Սարգսյան Լուիզա, 4. Այվազյան Արա, 5. Մանուկյան Արմեն, 6. Բաբայան Մետաքսյա, 7. Գրիգորյան Մարտուն, 8. Սուրենյանց Սուրեն, 9. Վարդանյան Էլինար, 10. Հովհաննիսյան Վահե, 11. Ստեփանյան Գեւորգ, 12. Տոնոյան Իվետա, 13. Մելքումյան Միքայել, 14. Աբովյան Արման, 15. Առուստամյան Նորա, 16. Ռոստոմյան Հրաչյա, 17. Փիրոյան Արման, 18. Մանուկյան Լիաննա, 19. Քոսակյան Արմեն, 20. Գրիգորյան Կարեն, 21. Դավթյան Նունե, 22. Բոզոյան Երվանդ, 23. Կակոյան Կամո, 24. Կարապետյան Սաթենիկ, 25. Շաքարյան Ռոման, 26. Դանիելյան Ստեփան, 27. Մանուկյան Արեգնազ, 28. Հարությունյան Մխիթար, 29. Սերգոյան Կարեն, 30. Գրիգորյան Գայանե:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«Ո՞Վ ԱՍԱՑ, ՈՐ ՆԱ ՊԵՏՔ Է ԿԱՆԳՆԻ ԱՏՅԱՆՈՒՄ»

Սուրբ Աննա եկեղեցում ծաղկազարդի օրը տեղի ունեցած միջադեպի, Դավիթի կալանավորման եւ դրա իրավական ու բարոյական գնահատականի հետ կապված հարցերով ArmLur.am-ը զրուցել է նախկին հոգեւորական Նիկողոս Հովհաննիսյանի հետ:

- Կխնդրեմ նշել՝ Ձեր գնահատմամբ ի՞նչ տեղի ունեցավ Սուրբ Աննա եկեղեցում, եւ որպես նախկին հոգեւորական՝ ընդհանրապես ի՞նչ տեղի ունեցավ այդ օրը՝ Ծաղկազարդին:

- Նախ նշենք, որ Ծաղկազարդը այն տոնն է, որը յուրաքանչյուրի համար հոգու բացվելու, դռնբացեքի տոն է: Մարդիկ եկել էին աղոթելու, եկել էին խաղաղությամբ կանգնելու եկեղեցում: Մենք կադրերում տեսնում ենք Դավիթին, ով պատարագի ընթացքում հանգիստ կանգնած աղոթում էր:

Մենք նաեւ ականատես եղանք այն պահին, երբ տվյալ անձը անցնում էր Դավիթի դիմացով, եւ Դավիթը պարզապես գլուխը թեքեց, որպեսզի չտեսնի նրան: Սակայն հետ վերադառնալիս, երբ սկսեցին մարդկանց հրել, երեխաներին քաշքշել, թիկնապահների կողմից անհարկի միջամտություն եղավ, հենց այդտեղից, իմ կարծիքով, սկսվեց ամբողջ միջադեպը:

Բայց, այնուամենայնիվ, դա որեւէ կերպ հիմք չէր կարող լինել տղային կալանավորելու համար: Մենք կադրերում նաեւ տեսնում ենք, որ թիկնապահներից մեկը հարվածում է Դավիթին: Եթե Հայաստանում գործում է Սահմանադրությունը եւ պահպանվում է սահմանադրական կարգը, ապա բոլորս գիտենք, որ մարդը բացարձակ արժեք է Հայաստանի Հանրապետությունում, առավել եւս՝ 18-ամյա մի երիտասարդ, որը, ըստ երեւույթին, որեւէ հանցավոր գործողություն չի կատարել:

Այս պահին նա կալանքի տակ է՝ իր առողջական խնդիրներով հանդերձ, եւ արդեն հիվանդանոցում է: Սա պարզապես անմարդկային վերաբերմունք է եւ, կարելի է ասել, նաեւ իրավական բացերի հետեւանք:

- Փաշինյանի՝ որպես վարչապետի պահվածքը եւս կցանկանայի, որ մեկնաբանեք: Նա եկեղեցի էր մտել այն պահին, երբ արարողություն էր ընթանում, եւ եկեղեցին լեփ-լեցուն էր, բայց կարծես ճեղքելով փորձում էր առաջ գնալ: Եթե վարչապետ է, արդյո՞ք պարտադիր է առաջին շարքում կանգնելը:

- Երբ դու պաշտոնապես հրավիրված ես որեւէ արարողության մասնակցելու, քո համար տեղը նախապես պահվում է: Եթե հարգանք ունես եկեղեցու եւ եկեղեցական արարողակարգի նկատմամբ, առաջին հերթին պետք է ժամանակին ներկայանաս, որպեսզի լիարժեք մասնակցես արարողությանը:

Եթե ուշ ես գալիս եւ պարզապես ցանկանում ես մասնակցել, ապա, որպես խոնարհ քրիստոնյա, պետք է կանգնես դռան մոտ կամ պատի տակ: Սա քրիստոնյայի կեցվածք է:

Ո՞վ ասաց, որ նա պետք է կանգնի ատյանում: Որեւէ մեկը չի կարող իրեն կանգնեցնել ատյանում, եթե պաշտոնապես հրավիրված չէ այդ տեղում գտնվելու: Եւ այն քրիստոնեությունը, որի մասին նա խոսում է՝ եկեղեցին բարեկարգելու եւ նման հարցերի շուրջ, իրականում որեւէ կապ չունի եկեղեցական իրական կյանքի եւ ավանդույթի հետ:

- Որպես նախկին հոգեւորական՝ կանդրադառնա՞ք եկեղեցի-պետություն հարաբերություններին այս օրերին: Նաեւ կխնդրեմ անդրադառնալ կարգալույծ քահանաների եւ բարձրաստիճան հոգեւորականների վարքագծին:

- Սկսենք վերջից: Եկեղեցին միշտ ունի բարենորոգման եւ բարեկարգման կարիք: Դա բնական գործընթաց է եւ տարիների ընթացքում պետք է իրականացվի:

Սակայն եկեղեցու բարեկարգմամբ չպետք է զբաղվեն աշխարհիկ մարդիկ, առավել եւս՝ պետական պաշտոնյաները: Եկեղեցու բարեկարգումը կատարվում է եկեղեցական ատյանների ներսում՝ հոգեւորականների եւ համապատասխան կառույցների միջոցով:

Այն մարդիկ, ովքեր այսօր փորձում են զբաղվել այդ հարցերով՝ սկսած վարչապետից մինչեւ նրա աշխատակիցները կամ հետեւորդները, չունեն ո՛չ այդ իրավունքը, ո՛չ էլ համապատասխան կրթությունը:

Ինչ վերաբերում է կարգալույծ հոգեւորականներին, ապա նրանք արդեն իսկ թողել են իրենց կարգը: Շատ դեպքերում սա ավելի շատ անձնական վիրավորվածության եւ մանր քինախնդրության դրսեւորում է:

Եթե իսկապես նպատակ կա բարենորոգել եկեղեցին, դա պետք է արվի բացառապես եկեղեցու ներսում:

Ինչ վերաբերում է բարձրաստիճան հոգեւորականներին, այստեղ աստիճանը էական չէ: Վեհափառ Հայրապետի շնորհիվ այդ մարդիկ ապրել են Մայր Աթոռում, սնվել են, հագնվել են, կրթություն են ստացել, եկեղեցական աստիճաններ են ստացել եւ գործուղվել են տարբեր մարզեր՝ ծառայելու:

Կարծում եմ՝ նույնիսկ իրենց մարմնավոր հայրերը գուցե այդքան բան չեն արել նրանց համար, որքան Վեհափառ Հայրապետը:

- Վերջում, առանց որեւէ մեկի անձնական կյանքին անդրադառնալու, կխնդրեմ նշել՝ ո՞ր դեպքերում է Հայ առաքելական սուրբ եկեղեցին թույլ տալիս ամուսինների բաժանումը:

- Առաջին եւ ամենակարեւոր հիմքը դավաճանությունն է:

Բաժանում կարող է թույլատրվել նաեւ այն դեպքում, երբ կողմերի միջեւ կա համաձայնություն եւ առկա է անբուժելի հիվանդություն:

Բնականաբար, եթե կողմերից մեկը մահանում է, դա եւս համարվում է ամուսնության դադարեցման հիմք:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՀՈԳԵՎՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐ ԽԵԼՔԻ ԲԱՆԸ ՉԷ

Հայոց եկեղեցու պահպանության համահայկական խորհուրդը խստագույնս դատապարտում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագրում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դեմ ուղղված անընդունելի, աղօրինի եւ հակասահմանադրական դրույթների ներառումը:

Ինչ-որ կուսակցական խմբակ իրեն վերապահել է Եկեղեցին «բարենորոգելու», կանոնադրություն փոխելու, Ամենայն Հայոց Կաթողիկոսին տապալելու եւ նոր ընտրություններ պարտադրելու լիազորություն: Սա խղճի, կրոնի ազատության եւ մարդկային տարրական բարոյականության ոչ թե խախտում է, այլ բացահայտ բռնաբարություն: Եկեք իրերը կոչենք իրենց անուններով. սա պարզապես տգետների հերթական սխալը չէ: Սա պետական լծակներով հայ ժողովրդի ողնաշարը կոտրելու, Մայր Աթոռը իշխանական խամաճիկների գրասենյակի վերածելու եւ մեր դարավոր դիմադրողականությունը վերջնականապես ոչնչացնելու ծրագրված դավաճանություն է: Սա ուղիղ հարված է մեր հիմքերին, որը, վստահաբար, թելադրված է հայակործան արտաքին օրակարգերով: Հեռո՛ւ պահեք ձեր պիղծ ձեռքերը Հայոց Եկեղեցուց: Եկեղեցին ձեր կուսակցական բջիջը չէ, որտեղ կարող եք շարունակել ձեր ապաշնորհ փորձարկումները: Հոգեւոր իշխանությունը ձեր խելքի բանը չէ: Կաթողիկոսի ընտրությունն ու Եկեղեցու կանոնական կարգը բացառապես հոգեւոր տիրույթում են: Դուք չեք ստեղծել այս Եկեղեցին, որ դուք էլ ձեզ իրավունք վերապահեք այն քանդել: Պահանջում ենք անհապաղ աղբանոց նետել ձեր նախընտրական ծրագրի այդ պղծագործ եւ հակասահմանադրական դրույթները, դադարեցնել պետական ապարատի միջոցով Եկեղեցու դեմ տարվող լկտի ահաբեկչությունն ու միջամտությունը մեր ներքին հոգեւոր կյանքին, հրապարակայնորեն հրաժարվել ժողովրդի սրբություններն ու ազգային ինքնիշխանությունը ոտնատակ տվող ցանկացած ձեւակերպումից: Սփյուռքի եւ Հայաստանի սիրելի՛ հայրենակիցներ, այսօր լռելը հավասարազոր է ազգուրացության եւ հանցակցության: Վտանգված է մեր վերջին ու ամենաամուր բերդը: Մենք պարտավոր ենք անզիջում կերպով մերժել ու պատմության լուսանցք շպրտել հակաեկեղեցական ու հակահայ ցանկացած ուժի: Պաշտպանենք Մայր Աթոռի սրբազան անկախությունն ու մեր արժանապատվությունը՝ կանխելով հոգեւոր պետականաքանդությունը:

Հայոց եկեղեցու պահպանության համահայկական խորհուրդ

ԷՍՏՈՆԻԱՆ ՊԱՏՐԱՍՏ Է ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Էստոնիայի արտաքին գործերի նախարար Մարգուս Ցահքնայի գլխավորած պատվիրակությանը:

Վարչապետը կարեւորել է Հայաստան-Էստոնիա բազմոլորտ համագործակցությունը եւ նշել, որ վերջին շրջանում երկկողմ հարաբերությունները կրում են ինտենսիվ բնույթ: Նիկոլ Փաշինյանը նշել է, որ դրա վկայությունն են նաեւ երկկողմ բարձր մակարդակի փոխայցելությունները, որոնք նոր ազդակ են հաղորդում տարբեր ուղղություններով կապերի ընդլայնմանը: Երկրի ղեկավարը կարեւորել է Էստոնիայի դերը նաեւ Հայաստան-Եվրոպական միություն համագործակցության զարգացման, այդ թվում՝ մեր երկրում ժողովրդավարական բարեփոխումների արդյունավետ իրականացման գործում:

Մարգուս Ցահքնան ընդգծել է Հայաստանի հետ համագործակցությունը խորացնելու հարցում Էստոնիայի շահագրգռվածությունը: Վերջինս նշել է, որ Էստոնիան պատրաստ է շարունակելու օժանդակությունը ՀՀ Կառավարության բարեփոխումների օրակարգն առաջ մղելու նպատակով, նպաստել նաեւ ՀՀ-ԵՄ փոխգործակցության խթանմանը: Էստոնիայի ԱԳ նախարարը կարեւորել է Երեւանում Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի անցկացումը՝ համոզմունք հայտնելով, որ այն կանցկացվի բարձր մակարդակով:

Նիկոլ Փաշինյանը եւ Մարգուս Ցահքնան մտքեր են փոխանակել տարածաշրջանային զարգացումների, ինչպես նաեւ ՀՀ-ԵՄ համագործակցության օրակարգի, վիզաների ազատականացման գործընթացի եւ այլ հարցերի շուրջ:

6 ՔՈՐ ԵՎ 5 ՎԻՐԱՎՈՐ



Երեկ Շիրակի մարզի Աղին բնակավայրի մոտակայքում ողբերգական ավտովթար է եղել: Մահացել է 6 քաղաքացի, իսկ 5-ը վիրավոր են: ArmLur.am-ը դեպքի վայրում էր:

Մեքենաները վերածվել են մետաղի ջարդոնի, դեպքի վայր են ժամանել փրկարարներ եւ ոստիկաններ:

11 հոգի հոսպիտալացվել է, որոնցից 5-ը երեխա է: Հոսպիտալացված երեխաներից 2-ի կյանքը փրկել չի հաջողվել: Առողջապահության նախարարությունն էլ հայտնել է, որ տուժածների առողջական վիճակը գնահատվում է ծանր եւ ծայրահեղ ծանր: Գտնվում են վերակենդանացման բաժանմունքում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄ Է ՇԱՐՈՒՆԱԿԵԼ

Ապրիլի 10-ին ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանն ընդունել է Հայաստանում Եվրոպական միության քաղաքացիական առաքելության նորանշանակ ղեկավար Սատու Կոյվուին:

Արմեն Գրիգորյանը շնորհավորել է տիկին Կոյվուին պատասխանատու պաշտոնը ստանձնելու կապակցությամբ՝ մաղթելով նրան հաջողություններ ապագա գործունեության ընթացքում: Նա նաեւ շնորհակալություն է հայտնել Հայաստանում ԵՄ քաղաքացիական առաքելության իրականացրած աշխատանքի համար եւ ընդգծել, որ Հայաստանը պատրաստակամ է շարունակել արդյունավետ համագործակցությունը:

Սատու Կոյվուն իր հերթին շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար եւ նշել, որ իր փորձն ու գիտելիքները ներդնելու է առաքելության գործունեության արդյունավետության առավել բարձրացման գործում:

ԿԱՐՈՂ ԵՆ ԱՐՏԱՔՍԵԼ

ԱՄՆ օրենքները խախտելը կարող է լուրջ հետեւանքներ ունենալ ուսանողական վիզայի վրա, հայտնում է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատունը:

«Եթե ձերբակալվել եք կամ խախտել ԱՄՆ որեւէ օրենք, ձեր վիզան կարող է հետ կանչվել, իսկ ձեզ կարող են արտաքսել ու զրկել հետագայում ԱՄՆ վիզա ստանալու հնարավորությունից:

Եղե՛ք օրինապահ եւ զե՛րծ մնացեք այնպիսի քայլերից ու արարքներից, որոնք կարող են վտանգել ձեր այցը»:

ԴԱԴԱՐԵՑՐԵԼ ԵՆ

Փետրվարի 27-ին «Միասնության թեւեր» քաղաքական նախաձեռնությունը եւ «ՀայաՔվե» ազգային քաղաքացիական միավորումը ստորագրեցին համագործակցության հուշագիր՝ հավաստելով իրենց պատրաստակամությունը՝ մեկ միասնական ճակատով հանդես գալու հունիսի 7-ին կայանալիք համապետական ընտրություններին:

Անցած ժամակաշրջանում երկու կազմակերպությունների ղեկավար մարմինների եւ անդամների կողմից կատարվել է մեծ ծավալի աշխատանք՝ միասնական քաղաքական ծրագիր մշակելու եւ նոր քաղաքական բեւեռ ձեւավորելու նպատակով: Միեւնույն ժամանակ, մի շարք առանցքային ծրագրային հարցերում մեզ դեռեւս չի հաջողվել միասնական դիրքորոշում ձեւավորել, ուստի մենք որոշում ենք կայացրել՝ ներկա փուլում այս ձեւաչափով ավարտելու համատեղ աշխատանքը:

Մենք շնորհակալություն ենք հայտնում մեր երկու կազմակերպությունների բոլոր անդամներին եւ աջակիցներին վստահության եւ համագործակցության համար, եւ փոխադարձ հաջողություն ենք ցանկանում մեր հայրենիքի անվտանգության եւ բարօրության համար մղվող պայքարում:

«ՀայաՔվե» ազգային քաղաքացիական միավորման խորհուրդ

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՋ»

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԵԼ Է ԱԴՐԲԵՋԱՆ

ArmLur.am-ը «Հայկական խորհուրդ» վերլուծական կենտրոնից եւ ադրբեջանական լրատվամիջոցներից տեղեկացավ, որ 2026 թվականի ապրիլի 10-ից 12-ը Ադրբեջանի Հանրապետությունում «Խաղաղության կամուրջ» նախաձեռնության շրջանակում տեղի կունենա քաղաքացիական հասարակությունների ներկայացուցիչների հերթական երկկողմ կլոր սեղանը՝ Հայաստանի եւ Ադրբեջանի մասնակցությամբ:

Ըստ ադրբեջանական մամուլի՝ նախաձեռնությունը շարունակում է նպաստել երկու երկրների քաղաքացիական հասարակությունների միջեւ երկխոսությանն ու ուղիղ շփումներին: Այս անգամ հայկական պատվիրակությունը Ադրբեջան է մեկնել ցամաքային սահմանով՝ անցնելով սահմանազատված եւ սահմանագծված հատվածը, ինչպես նաեւ համապատասխան սահմանային եւ անձնագրային ընթացակարգերը:

Քննարկումները անցկացվում են Վաշինգտոնում 2025 թվականի օգոստոսի 8-ին տեղի ունեցած ԱՄՆ-Ադրբեջան-Հայաստան եռակողմ գագաթնաժողովում հաստատված խաղաղության օրակարգի շրջանակում:

Հանդիպման օրակարգում ներառված են խաղաղ գործընթացի ներկա վիճակի, նախաձեռնության շրջանակում իրականացվող գործունեության եւ տարածաշրջանային իրավիճակի քննարկումները: Առանձին նիստեր նվիրված են հասարակական մակարդակում խաղաղության առաջմղմանը եւ վստահության ամրապնդմանը:

Հայկական պատվիրակության կազմը հետեւյալն է.

1. Արեգ Քոչինյան - «Հայկական խորհուրդ» վերլուծական կենտրոնի նախագահ, համակարգող
2. Բորիս Նավասարդյան - Երեւանի մամուլի ակումբի նախագահ
3. Նաիրա Սուլթանյան - Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տնօրեն
4. Նարեկ Մինասյան - «Հայկական խորհուրդ» վերլուծական կենտրոնի ասոցացված փորձագետ
5. Սամվել Մելիքսեթյան - «Հայկական խորհուրդ» վերլուծական կենտրոնի փորձագետ
6. Ստեփան Գրիգորյան - Գլոբալիզացիայի եւ տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի խորհրդի նախագահ
7. Էդգար Վարդանյան - «Հայկական խորհուրդ» վերլուծական կենտրոնի ասոցացված փորձագետ
8. Ռոբերտ Ղեւոնդյան - «Հայկական խորհուրդ» վերլուծական կենտրոնի փորձագետ
9. Լուսինե Խառատյան - Գրող, մշակութային մարդաբան
10. Նելլի Մինասյան - Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, թուրքագետ
11. Դավիթ Ստեփանյան - 1in.am-ի քաղաքական մեկնաբան, Միջազգային եւ անվտանգության հարցերի հայկական ինստիտուտի փորձագետ
12. Ռուբեն Բաբայան - Երեւանի տիկնիկային թատրոնի գեղարվեստական ղեկավար
13. Էլեոնորա Սարգսյան -Խաղաղության եւ գենդերային հարցերի փորձագետ, երիտասարդական աշխատող
14. Նաիրա Մարտիկյան - JAMnews-ի հայաստանյան գրասենյակի խմբագիր եւ տնօրեն
15. Վազգեն Կարապետյան - «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամի ծրագրերի ղեկավար
16. Տաթեւ Դանիելյան - Հայաստանի հանրային հեռուստաընկերության քաղաքական հաղորդումների գլխավոր խմբագիր եւ հաղորդավար
17. Արմեն Պետրոսյան - «Օրբելի» կենտրոնի տարածաշրջանային քաղաքականության փորձագետ
18. Ալեն Ամիրխանյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) «Յակոբեան» բնապահպանական կենտրոնի տնօրեն
19. Նելլի Ռաֆայելյան - Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի լրագրող
20. Հանրային հեռուստաընկերության օպերատոր

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԻՍԼԱՄԱԲԱԴԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է

Իսլամաբադում սպասողական լարված մթնոլորտ է վերջին օրերին, քանի որ քաղաքը պատրաստվում է շաբաթ օրը հյուրընկալել ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ կարեւոր բանակցությունները: Դրանք նախատեսվում են վեցշաբաթյա պատերազմի ավարտից հետո, որը Մերձավոր Արեւելքում հազարավոր զոհերի պատճառ է դարձել:

Քաղաքի կառավարական կարեւոր շենքերը՝ «Կարմիր գոտի» տանող գլխավոր պողոտան փակ է, իսկ ամբողջ տարածքում նկատվում է ուժեղացված ռազմական ներկայություն: Տարածքում տեղադրվել են բազմաթիվ անցակետեր, եւ հայտարարված պետական հանգստյան օրվա պատճառով երթեւեկությունը նվազագույնի է հասցված: Բանակցությունների անցկացման վայր է ընտրվել Serena Hotel Islamabad-ը, որը գտնվում է «Կարմիր գոտում»՝ Արտաքին գործերի նախարարության հարեւանությամբ: Անվտանգության ծառայությունները ամբողջությամբ վերահսկում են հյուրանոցը, իսկ հյուրերին խնդրել են լքել տարածքը:

Իրանի պատվիրակությունը սպասվում է՝ խորհրդարանի նախագահ Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆի գլխավորությամբ, որին պետք է միանա նաեւ արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչին: Ավելի վաղ այս մասին տեղեկացնող գրառումը հեռացվել է, եւ այժմ սպասվում է, որ պատվիրակությունը կժամանի այսօր:

ԱՄՆ պատվիրակությունը կգլխավորի փոխնախագահ Ջեյ Դի Վենսը: Նրա հետ միասին Իսլամաբադ կժամանեն նաեւ Ջարեդ Քուշները եւ Սթիվ Ուիթքոֆը, որոնք նախկինում արդեն ներգրավված են եղել Իրանի հետ բանակցություններում՝ մինչեւ պատերազմի սկսվելը:

Բանակցությունները դիտարկվում են որպես կարեւոր փուլ տարածաշրջանային լարվածության թուլացման ուղղությամբ:

ԿԱՆԳՆԱԾ Է ՃՆՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋ

Իսրայելի վարչապետ Բենիամին Նետանյահուն հայտնվել է բարդ քաղաքական իրավիճակում՝ աճող ներքին եւ միջազգային ճնշումների պայմաններում, այս մասին գրում է «Ալ Ջազիրան»:

Իսրայելական լրատվամիջոցներում հրապարակված հարցումների համաձայն՝ բնակչության 58 տոկոսը կասկածանքով է վերաբերվում հրադադարին եւ այն արդյունքներին, որոնք Իսրայելն արձանագրել է Իրանի հետ պատերազմի ընթացքում: Միեւնույն ժամանակ, հարցվածների 79 տոկոսը աջակցում է ռազմական գործողությունների շարունակմանը «Հեզբոլլահ»-ի դեմ եւ Լիբանանում նրա գործունեության դադարեցմանը:

Միջազգային հարթակում եւս Նետանյահուի նկատմամբ ճնշումները աճում են: Հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգները, ինչպես նաեւ Գերմանիան, Կանադան եւ այլ երկրներ կոչ են անում նրան հավատարիմ մնալ հրադադարի պայմանավորվածություններին:

Ստեղծված իրավիճակը կարող է Նետանյահուին կանգնեցնել լուրջ քաղաքական ընտրության առաջ՝ հատկապես մոտեցող ընտրությունների ֆոնին, եթե իսրայելական ընտրողների մեծամասնությունը չաջակցի հրադադարի պահպանմանը:

ՄՈՍԿՎԱՆ ԵՎ ԿԻԵՎԸ ՀԱՄԱՁԱՅՆԵԼ ԵՆ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել է 32-ժամյա հրադադար՝ ուղղափառ Զատկի կապակցությամբ, ինչը ողջունել է Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին: Կրեմլի հաղորդմամբ՝ հրադադարը կգործի ապրիլի 11-ի ժամը 16:00-ից մինչեւ ապրիլի 12-ի օրվա ավարտը: «Մենք ելնում ենք այն կանխավարկածից, որ ուկրաինական կողմը կհետեւի Ռուսաստանի օրինակին»,- նշված է Կրեմլի հայտարարությունում:

Պուտինի այս որոշումը նման է անցյալ տարի հայտարարված 30-ժամյա հրադադարին, որի ընթացքում կողմերը միմյանց մեղադրում էին խախտումների մեջ:

Զելենսկին իր հերթին նշել է, որ Ուկրաինան պատրաստ է փոխադարձ քայլերի. «Մենք արդեն առաջարկել էինք հրադադար Զատկի ընթացքում եւ գործելու ենք համապատասխանաբար»:

Միեւնույն ժամանակ, իրավիճակը շարունակում է մնալ լարված: Մոսկվան սպառնացել է հարվածներ հասցնել Բալթյան երկրներին, որոնք թույլ են տալիս Ուկրաինային օգտագործել իրենց օդային տարածքը՝ Ռուսաստանին հարվածող անօդաչու թռչող սարքերի համար:

Զուգահեռաբար, Ռուսաստանի հատուկ ներկայացուցիչ Կիրիլ Դմիտրիեւը գտնվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որտեղ հանդիպումներ է անցկացնում ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմի ներկայացուցիչների հետ: Քննարկումները վերաբերում են Ուկրաինայի շուրջ հնարավոր խաղաղության համաձայնագրին եւ ԱՄՆ-Ռուսաստան տնտեսական համագործակցությանը:

ՈՎՔԵ՞Ր ԳԻՏԵԻՆ

ՍՊԱՆՎԱԾ ԿԻՆԸ ՏՈԿՈՍՈՎ ՓՈՂ Է ՏՎԵԼ

Շենգավիթ վարչական շրջանում կնոջը դանակի հարվածներով սպանելու դեպքից ArmLur.am-ին մանրամասներ են հայտնի դարձել: Տարեց կինը, ըստ նախնական վարկածի, վերոնշյալ հասցեում ապրել է թոռան հետ, վերջինիս թոռը աշխատանքի է եղել ու երբ աշխատանքից վերադարձել է տուն, հայտնաբերել է տատիկին սպանված, իսկ տունը տակնուվրա արված:

Ըստ նախնական վարկածի՝ ենթադրյալ հանցագործը կամ հանցագործները բնակարան են մտել գողության նպատակով ու սպանել են կնոջը: Նախնական տեղեկությունների համաձայն՝ սպանված կինը տոկոսով փող է տվել մարդկանց (փոխառություն), ու չի բացառվում, որ ենթադրյալ հանցագործները այս մասին իմացել են ու ավազակային հարձակում են իրականացրել: Այս պահին ձերբակալված անձ չկա, իրավապահները օպերատիվ աշխատանքներ են իրականացնում:

Հիշեցնենք՝ հայտնել էինք, որ ապրիլի 9-ի գիշերը օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ Շենգավիթ վարչական շրջանի Ֆրունզեի փողոցի բնակարաններից մեկում կնոջ դի կա: ArmLur.am-ը տեղեկացավ, որ դեպքի վայր էր ժամանել ՀՀ ՆԳ նախարարի տեղակալ, ոստիկանապետ Կամո Ցուցուլյանը: Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, դեպքի վայր են ժամանել նաեւ քրեական եւ համայնքային ոստիկանները: Հայտնաբերվել են նաեւ արնանման հետքեր:

Դեպքի վայրում հավաքված մի քանի քաղաքացիներ, որոնք հրաժարվել են տեսախցիկի առաջ խոսել, ասում էին. «Սպանված կինը բարեկամներ ունի Միացյալ Նահանգներում եւ կարելի է ասել՝ միայնակ էր բնակվում: Մինչեւ ժամը 12:00-13:00-ն նա պատասխանել է իր հարազատների հեռախոսազանգերին, իսկ ժամը 13-ից հետո, երբ սկսել է չպատասխանել, ազգականը եկել է տուն եւ հայտնաբերել նրան մահացած, իսկ տունը ամբողջությամբ տակնուվրա արված»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ ԵՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ապրիլի 8-ին մշտադիտարկման չհայտարարված այց են իրականացրել ՀՀ Արմավիրի մարզի Մեռձավանի միջնակարգ դպրոց:

Այցի ընթացքում ուսումնասիրվել են դպրոցի շենքային, սանիտարահիգիենիկ պայմանները, ինչպես նաեւ մանկավարժական անձնակազմի եւ սովորողների միջեւ հարաբերությունները, նրանց իրավունքների եւ շահերի պաշտպանության վիճակը: Դպրոցի տնօրինության հետ քննարկվել են շենքային պայմանների բարելավման, սովորողների իրավունքների ապահովման, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող եւ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի լիարժեք ու անխոչընդոտ իրացման, մանկավարժական անձնակազմի, տնօրինության եւ սովորողների միջեւ առկա խնդիրներին վերաբերող եւ այլ հարցեր:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ծանոթացել են դասապրոցեսի կազմակերպման գործընթացներին, առանձնազրույցներ են ունեցել սովորողների հետ, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել կրթության իրավունքի արդյունավետ իրացման հետ կապված խնդիրներին:

Պաշտպանի ներկայացուցիչներն արձանագրել են մի շարք խնդիրներ, որոնց մի մասը համակարգային են եւ պահանջում են անհետաձգելի լուծում: Մասնավորապես՝ դպրոցին ամրակցված շենքը վատթար վիճակում է, սանհանգույցները՝ հին, առկա են սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման հետ կապված խնդիրներ: Ընդհանուր առմամբ, դպրոցի շենքային պայմանները ոչ բարվոք վիճակում են, իսկ ֆիզիկական միջավայրը հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի չէ: Առկա է խելամիտ հարմարեցումների ապահովման անհրաժեշտություն: Դպրոցն ունի բազմամասնագիտական թիմով համալրվելու անհրաժեշտություն եւ այլն: Արձանագրված խնդիրները Պաշտպանի ներկայացուցիչները քննարկել են դպրոցի տնօրենի հետ: Վերջինս ներկայացրել է խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկված քայլերը, ինչպես նաեւ դրանց հետագա լուծման տեսլականը:

Այցի ընթացքում դպրոցի տնօրինությունը եւ մանկավարժական անձնակազմն արդյունավետ համագործակցել են Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների հետ: Մշտադիտարկման չհայտարարված այցի արդյունքները, ներառյալ՝ Պաշտպանի կողմից բազմիցս բարձրաձայնվող համակարգային խնդիրները, կամփոփվեն, եւ առաջիկայում դրանք արտացոլող փաստաթուղթն ու առաջարկությունները կներկայացվեն ոլորտի իրավասու մարմիններին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ

ԼՈՒՐԵՐ

ՂԱԶԱԽՍՏԱՆԸ ՀԱՆՁՆԵԼ Է ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂ ԱՆՁԻ

Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը բավարարել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջնորդությունը. հետախուզվող անձ Ա.Զ.-ն, ով մեղադրվում է հանցավոր կազմակերպությանը մասնակցելու, դրա կազմում 19 միլիոն դրամ համակարգչային հափշտակություն կատարելու եւ փողերի լվացման մեջ, հանձնվել է Հայաստանի իրավասու մարմիններին:

ՀՀ գլխավոր դատախազության հանձնարարությամբ՝ Ներքին գործերի նախարարության ոստիկանության աշխատակիցների կողմից ապահովվել է Ա.Զ.-ի տեղափոխումը Երեւան:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԵՆ ԿԵՂԾ ՀԱՇԻՎ ԱՊՐԱՆՔԱԳՐԵՐ

2026 թվականի ապրիլի 9-ին պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 111 միլիոն 900 հազար դրամը:

Քննչական կոմիտեում քննվող քրեական գործով պարզվել է, որ 2015 թվականի ապրիլի 8-ին «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից 14.000 տոննա բիտումի ձեռքբերման վերաբերյալ հայտարարված մրցույթին մասնակցած եւ հաղթող ճանաչված ընկերությունը 2016 թվականի օգոստոսից մինչեւ նոյեմբերն ընկած ժամանակահատվածում կազմել եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամին է ներկայացրել կեղծ հաշիվ ապրանքագրեր, որի արդյունքում պետությանը, նախնական հաշվարկով, պատճառվել է 171 միլիոն 515 հազար դրամի վնաս:

Դատախազը 2026 թվականի ապրիլի 7-ին հանրային քրեական հետապնդումներ է հարուցել ՓԲ ընկերության տնօրեն Ա.Ա.-ի նկատմամբ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով (առանձնապես խոշոր չափերով հարկել չվճարելուն օժանդակելը), ՍՊ ընկերության հիմնադիր Ա.Մ.-ի նկատմամբ՝ 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով (առանձնապես խոշոր չափերով հարկել չվճարելը կազմակերպելը) եւ ՍՊ ընկերության տնօրեն Խ.Հ.-ի նկատմամբ՝ 205-րդ հոդվածի 2-րդ մասով (առանձնապես խոշոր չափերով հարկեր վճարելուց չարամտորեն խուսափելը):

Քրեական վարույթի ընթացքում վերականգնվել է պետությանը պատճառված վնասից 111 միլիոն 900 հազար դրամը:

Նախաքննությունն ընթացքի մեջ է:

● *Ապրիլի 8-ից 9-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է սառը զենքի հայտնաբերման 3 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԴԵՌ ՉԵՆ ՎԵՐԱՑՐԵԼ

2024թ. մայիսի 27-ի ջրհեղեղը ավերածություններ գործեց, դրա հետեւանքով Լոռու եւ Տավուշի մարզերում 2-ական զոհ եղավ: 2026թ. մարտի 17-ին Տավուշի մարզպետ Հ. Ղալումյանին հարցում եմ արել. «2024թ. մայիսի 27-ի ջրհեղեղից տուժած ֆիզիկական եւ իրավաբանական անձանց պետական աջակցությունն ավարտվե՞ց, թե՞ շարունակվելու է, եթե շարունակվելու է, ե՞րբ, ո՞ւմ է այն տրվելու: Ջրհեղեղից տուժածներին մինչեւ հիմա որքա՞ն ֆինանսական աջակցություն է տրվել»: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «2024թ. մայիսի 27-ի դրությամբ ջրհեղեղից տուժած ֆիզիկական եւ իրավաբանական անձանց աջակցության հետ կապված՝ հանրապետական հանձնաժողովին ներկայացված ակտով անհատական բնակելի տներին պատճառված ընդհանուր վնասի գումարը՝ վերանորոգման, առաջնային գույքի եւ բնակարանի գնման վկայագրի համար կազմել է 89,702,900 դրամ: Վնասվել է 32 տրանսպորտային միջոց, որից 29-ին տրվել է 32,9 մլն. դրամ ֆինանսական աջակցություն: Տուժել է 307 գյուղացիական տնտեսություն: Նոյեմբերյան համայնքում՝ 292, Դիլիջան համայնքում՝ 15, որոնց փոխհատուցման նպատակով տրված գումարը կազմել է 48,665 մլն դրամ: Տուժել է 30 տնտեսվարող, 15-ը՝ Նոյեմբերյանում, 10-ը՝ Դիլիջանում, 5-ը՝ Իջեւանում: Ոչ բնակելի շինություններին պատճառված վնասի համար ֆինանսական աջակցություն են ստացել Դիլիջան համայնքում 9 շահառու, Նոյեմբերյանում՝ 125: Ընդհանուր տրվել է 18 մլն. 850 հազար դրամ գումար, իսկ երկրորդ փուլով Նոյեմբերյան համայնքի գյուղացիական տնտեսություններին պատճառված վնասի համար տրամադրվել է 412,58,000 հազար դրամ: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ շարունակվելու մասին տեղեկատվություն չունենք»:

2024թ. ջրհեղեղից գրեթե 2 տարի է անցել, սակայն այդ ջրհեղեղից միջպետական ավտոճանապարհի Դիլիջան-Իջեւան հատվածում վնասված ճանապարհահեզրերը չեն վերականգնվել: Մարտի 5-ին տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին հարցում եմ արել, թե այդ հատվածների վերականգնումը երբ է իրականացվելու, որքան գումար է նախատեսված այդ նպատակով: ՏԿԵ նախարարի տեղակալ Ա. Դարբինյանի ստորագրությամբ պատասխանում նշված է. «Մ4 Երեւան-Սեւան-Իջեւան-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Դիլիջանից մինչեւ Հ-30 ավտոճանապարհի հետ հատման կետ հատվածում ջրհեղեղի հետեւանքով ողողված եւ փլուզված 10 տեղամասերի վերակառուցման աշխատանքներն իրականացվելու են «Մոստ Կոնտրակտ» ՍՊԸ-ի կողմից: Կառավարության համապատասխան որոշմամբ 526 518 000 դրամ միջոցներ են նախատեսվել աշխատանքների կատարման համար, աշխատանքները բարենպաստ եղանակային պայմանների դեպքում կմեկնարկեն»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԽՎԱԾ ԵՆ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ՀՐԱԴԱԴԱՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԻՑ

Իրանը հայտարարել է, որ պատերազմի ավարտի շուրջ բանակցությունների անցկացումը պայմանավորված է ԱՄՆ-ի կողմից հրադադարի պարտավորությունների լիարժեք պահպանմամբ՝ հատկապես Լիբանանում:

Իրանի ԱԳՆ խոսնակ Էսմայիլ Բաղայի խոսքով՝ Վաշինգտոնը պետք է հավատարիմ մնա հրադադարի պայմանավորվածություններին բոլոր ուղղություններով: Նա խստորեն դատապարտել է Լիբանանում իսրայելական գործողությունները եւ ցավակցություն հայտնել զոհվածների ընտանիքներին, ինչպես նաեւ Լիբանանի ժողովրդին ու կառավարությանը:

Բաղային ընդգծել է Լիբանանի ժողովրդի «դիմադրությունը» եւ նշել, որ Իրանի եւ Լիբանանի ժողովուրդների միջեւ համերաշխությունն այսօր ավելի ուժեղ է, քան երբեւէ:

Խոսելով հրադադարի եւ Լիբանանի հարցի կապի մասին՝ նա նշել է, որ Լիբանանում պատերազմի դադարեցումը կազմում է հրադադարի համաձայնության անբաժանելի մասը, որը առաջարկվել է Պակիստանի միջնորդությամբ: Նրա խոսքով՝ ԱՄՆ-ը պարտավորվել է դադարեցնել ռազմական գործողությունները բոլոր ուղղություններով, եւ ցանկացած հակառակ քայլ կնշանակի այդ պարտավորությունների խախտում:

Բանակցությունների անցկացման վայրի եւ ժամկետների վերաբերյալ Բաղային հայտնել է, որ Պակիստանը հրավիրել է կողմերին մեկնել Իսլամաբադ եւ սկսել բանակցություններ, սակայն դրանք դեռ գտնվում են քննարկման փուլում: Նա ընդգծել է, որ բանակցությունները հնարավոր են միայն այն դեպքում, եթե ԱՄՆ-ը երաշխավորի հրադադարի պահպանումը:

Իրանական պատվիրակության կազմի վերաբերյալ վերջնական որոշում դեռ չի հրապարակվել:

Հիշեցնենք, որ ԱՄՆ-ը եւ Իսրայելը լայնածավալ ռազմական գործողություններ էին սկսել Իրանի դեմ՝ Իրանի Իսլամական հեղափոխության առաջնորդ Այաթոլլա Սեյեդ Ալի Խամենեիի, ինչպես նաեւ բարձրաստիճան զինվորականների եւ քաղաքացիական անձանց սպանությունից հետո:

Ի պատասխան՝ Իրանի զինված ուժերը հարվածներ են հասցրել ԱՄՆ-ի եւ Իսրայելի դիրքերին տարածաշրջանում՝ հայտարարելով, որ կարողացել են զգալի վնաս հասցնել հակառակորդին:

Պակիստանի միջնորդությամբ կողմերը համաձայնել են երկշաբաթյա հրադադարի շուրջ, որի ընթացքում նախատեսվում է բանակցությունների անցկացում:

Իրանը ներկայացրել է 10 կետից բաղկացած ծրագիր, որը ներառում է, մասնավորապես, ԱՄՆ զորքերի դուրսբերում տարածաշրջանից, պատժամիջոցների վերացում եւ Հորմուզի նեղուցի վերահսկողության հարցը:

Ապրիլի 8-ին Իրանի Ազգային անվտանգության բարձրագույն խորհուրդը հայտարարել է, որ տեղի ունեցածը «պատմական հաղթանակ» է Իրանի համար՝ ընդգծելով, որ ԱՄՆ-ը ստիպված է եղել ընդունել բանակցությունների պայմանները:

Իրանը նաեւ նշել է, որ բանակցությունները չեն նշանակելու հակամարտության ավարտ, այլ կդառնան դրա շարունակությունը դիվանագիտական հարթությունում՝ ընդգծելով Վաշինգտոնի նկատմամբ անվստահությունը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ՝ «ՈՒԺԻ ՄԻՋՈՑՈՎ»

Իսրայելի վարչապետ Բենիամին Նետանյահուն, խոսելով Լիբանանի հետ առաջիկա բանակցությունների մասին, հայտարարել է արաբական երկրների հետ «ուժի միջոցով» խաղաղության համաձայնագրեր կնքելու իր մտադրության մասին:

«Ես արդեն չորս խաղաղության համաձայնագիր եմ կնքել արաբական երկրների հետ, եւ մտադիր եմ էլի կնքել՝ իրական խաղաղություն, խաղաղություն ուժի միջոցով», - պնդել է նա Իսրայելի հյուսիսային բնակիչներին ուղղված տեսաուղերձում, որը տարածել է վարչապետի գրասենյակը:

Նետանյահուն նաեւ գովաբանել է տեղի բնակիչների դիմադրողականությունը Լիբանանի տարածքից անընդհատ հրետակոծություններին եւ հայտարարել է շիական «Հեզբոլլահի» վրա հարձակումները շարունակելու իր մտադրության մասին: «Ես ուզում եմ ձեզ տեղեկացնել. Լիբանանում հրադադար չկա: Մենք շարունակում ենք հարվածել «Հեզբոլլահին» մեր ողջ ուժով եւ չենք դադարի, մինչեւ չվերականգնենք ձեր անվտանգությունը», - ասել է նա:

Վարչապետը հաստատել է, որ հանձնարարել է Իսրայելի կառավարությանը սկսել Լիբանանի հետ ուղիղ բանակցությունների նախապատրաստական աշխատանքները՝ «լիբանանյան կառավարության բազմիցս խնդրանքներից հետո»: Այս բանակցությունները, նրա խոսքով, երկու նպատակ ունեն. «Առաջինը՝ «Հեզբոլլահի» զինաթափումը: Երկրորդը՝ Իսրայելի եւ Լիբանանի միջեւ պատմական, երկարատեւ խաղաղության համաձայնագիր»:

ԿՈՉ Է ԱՐԵԼ ԴԱԴԱՐԵՑՆԵԼ

Մեծ Բրիտանիայի վարչապետ Քիր Սթարմերը հայտարարել է, որ Իսրայելի հարվածները Լիբանանում «սխալ են» եւ «պետք է դադարեցվեն»: Եռօրյա այցի ընթացքում Պարսից ծոցի երկրներ, նա ITV-ի հաղորդմանը տված հարցազրույցում ընդգծել է, որ հարցը վերաբերում է «սկզբունքներին», ոչ թե միայն նրան, թե արդյոք հարվածները խախտել են հրադադարի պայմանավորվածությունները:

Իրանի փոխարտգործնախարարը եւս հայտարարել է, որ վերջին հարվածները «լուրջ խախտում» են հրադադարի համաձայնության: Լիբանանի առողջապահության նախարարության տվյալներով՝ հարվածների հետեւանքով զոհվել է 303 մարդ: Սակայն Իսրայելը պնդում է, որ Լիբանանը չի ընդգրկվել հրադադարի շրջանակում:

Իսրայելի վարչապետ Բենիամին Նետանյահուն իր կառավարությանը հանձնարարել է հնարավորինս արագ սկսել բանակցություններ Լիբանանի հետ:

Սթարմերը նշել է, որ Միացյալ Թագավորությունը դեռեւս չի ծանոթացել հրադադարի փաստաթղթի ամբողջական մանրամասներին, ինչի պատճառով դժվար է միանշանակ գնահատել՝ արդյոք Իսրայելի գործողությունները խախտել են պայմանավորվածությունները:

Պատերազմի սկզբնական փուլում Մեծ Բրիտանիան հրաժարվել էր թույլատրել Ամերիկայի Միացյալ Նահանգներին օգտագործել բրիտանական ռազմաբազաները Իրանի դեմ հարվածների համար, սակայն հետագայում դրանք տրամադրվել են պաշտպանական գործողությունների նպատակով:

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը քննադատել է Մեծ Բրիտանիային եւ այլ դաշնակիցներին՝ հակամարտությանը ավելի ակտիվ չմասնակցելու համար:

Սթարմերը նշել է, որ չի ցանկանում ներգրավվել երկիրը գործողությունների մեջ, որոնք չունեն իրավական հիմք կամ հստակ մշակված ծրագիր: Նա նաեւ հավելել է, որ բրիտանական ռազմաբազաների օգտագործումը վերահսկվում է:

Վարչապետը ներկայումս գտնվում է Կատարում՝ Պարսից ծոցի երկրներ իր այցի շրջանակում, նախապես այցելելով Սաուդյան Արաբիա, Արաբական Միացյալ Էմիրություններ եւ Բահրեյն:

● *Ըստ վիճակագրության՝ ապրիլի 8-ից 9-ը բացահայտվել է անձնական ունեցվածքի գողության 2 դեպք:*

ՖԱՍԹ ԲԱՆԿ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ

Ֆասթ Բանկի աջակցությամբ օրերս Հովհաննես Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում կայացել է Բարդերի ակումբի հերթական բարեգործական համերգը: Երեկոյի ողջ հասույթը փոխանցվելու է «Հուսո տուն» բարեգործական հիմնադրամին՝ սոցիալական տարբեր ծրագրեր կյանքի կոչելու նպատակով:

Բարդերի ակումբի անդամ, հեղինակ-կատարող Արմինե Հայրապետյանն ընդգծել է, որ Բանկը դարձել է իրենց վստահելի եւ հարազատ գործընկերը. «Ֆասթ Բանկը մի շարք հարցերում բավական շատ օգնում է մեզ: Հատկապես այս ծրագրի շրջանակներում մենք էլ ավելի մեծ սիրով ու փայփայումով ենք մոտենում նման գործընկերությանը, որովհետեւ սա իսկապես հավաստում է այն, որ հանրության կարիքին ուղղված գաղափարների շուրջ համախմբումը, այն, որ շահույթ չի հետապնդում, լավագույն ապացույցն է ընկերության եւ երկարատեւ գործընկերության», - ասել է նա:

Հավելենք, որ Ֆասթ Բանկի եւ Բարդերի ակումբի բազմամյա գործակցության շնորհիվ կայացել են մեծաթիվ բարեգործական երեկոներ: Աջակցությունն ուղղված է ոչ միայն բարեգործական միջոցառումների իրականացմանը, այլեւ մշակութային կյանքի զարգացմանը Հայաստանում:

«Բարդերի ակումբի Ֆասթ Բանկի հետ համագործակցությունը տեղի է ունենում բազմաթիվ տարիներ: Բանկն օժանդակում է նմանատիպ միջոցառումներին, նաեւ «Հուսո Առագաստ» միջազգային փառատոնին, այնպես որ սա մեկ-երկու տարվա պատմություն չէ, այլեւս այս համագործակցությունն ունի պատմություն: Սա մի շատ կարեւոր եւ հետաքրքիր նախադեպ է, որովհետեւ սա կամուրջ է բիզնես ոլորտի եւ սոցիալական ոլորտի միջեւ», - նշել է Բարդերի ակումբի անդամ, հեղինակ-կատարող Արեգ Նազարյանը:

Ի դեպ, Ֆասթ Բանկը նախորդ տարի 600 միլիոն դրամից ավելի աջակցություն է տրամադրել Հայաստանում ամենատարբեր ոլորտների զարգացմանն ու բազմաթիվ նախաձեռնությունների իրականացմանը, այդ թվում՝ առողջապահական, գիտական, մշակութային, կրթական, երիտասարդական եւ համայնքային զարգացման ծրագրերի:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)

TEAM HOLDING

ԱՎԱՐՏՎԵԼ Է ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ

10-ը ապրիլի, 2026 թ., Երեւան. Team Holding ընկերությունը, Freedom Broker Armenia ներդրումային ընկերության օժանդակությամբ, ավարտել է 8,75% տարեկան արժեկտրոնային եկամտաբերությամբ դոլարային պարտատոմսերի տեղաբաշխման գործընթացը:

Պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցել են ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք, բանկային, ներդրումային եւ բարձր տեխնոլոգիական ոլորտները ներկայացնող ընկերությունները: Սա ցույց է տալիս ներդրումային պահանջարկի դիվերսիֆիկացված կառուցվածք եւ տեղական կապիտալի շուկայի զարգացման դրական դինամիկա:

Team Holding-ի պարտատոմսերը երկարաժամկետ ներդրումային գործիք են՝ ուղղված ընկերության ենթակառուցվածքային եւ տեխնոլոգիական ծրագրերի ֆինանսավորմանը: Ընկերության ռազմավարությունն ուղղված է թվային ենթակառուցվածքի զարգացմանը, նոր տեխնոլոգիաների ներդրմանը եւ տնտեսության համար արժեք ստեղծող նախագծերի իրականացմանը:

Երկրորդ փուլը մեկնարկեց արդեն ձեւավորված շուկայական հետաքրքրվածության եւ դրական արձագանքի պայմաններում: Երկրորդ փուլի շրջանակում տեղաբաշխված դոլարային պարտատոմսերի պայմաններն էին՝ անվանական ծավալը՝ 10 միլիոն ԱՄՆ դոլար, մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100 ԱՄՆ դոլար, արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը՝ 8,75%, շրջանառության ժամկետը՝ 48 ամիս, արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝ եռամսյակային:

Team Holding-ի պարտատոմսերի ծրագրային ազդագիրը գրանցվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում՝ 2025 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1/417Ա որոշմամբ:

Թողարկողի եւ առաջարկվող պարտատոմսերի բոլոր պայմանները, ինչպես նաեւ դրանց առնչվող ռիսկերը ներկայացված են ծրագրային ազդագրում:

«Թիմ Հոլդինգ» ՓԲԸ-ն, հիմնադրված 2021 թվականին Հայկ եւ Ալեքսանդր Եսայանների կողմից, ձեւավորվել է որպես դուստր եւ այլ ընկերություններում ներդրումներ կատարող «հոլդինգային» ընկերություն, որը միավորում է դուստր ընկերություններ տարբեր ոլորտներում եւ ստեղծում բազմաճյուղ կորպորատիվ էկոհամակարգ: Հոլդինգը միավորել է կախյալ եւ դուստր ընկերություններ տարբեր ոլորտներից՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ եւ համակարգային ինտեգրացիա, ֆինթեք, լոգիստիկա եւ էլեկտրոնային առեւտուր, էներգետիկա եւ շինարարություն, հյուրընկալության ոլորտ, գինեգործություն եւ բարձրորակ սպառողական ապրանքների մատակարարում: Այսօր Հոլդինգի գործունեությունը ընդգրկում է Հայաստանի տնտեսության մի շարք առանցքային ուղղություններ:

Freedom Broker Armenia-ն (իրավաբանական անվանումը՝ «Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ)՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված ներդրումային ընկերություն է, որն ապահովում է մուտք դեպի տեղական եւ միջազգային ֆոնդային շուկաներ: Ընկերությունն առաջարկում է ներդրումային ծառայությունների ամբողջական շրջանակ՝ արժեթղթերի առքուվաճառք, ֆոնդային ներդրումներ, IPO-ների մասնակցություն եւ ինքնուրույն առեւտուր առցանց հարթակի միջոցով:

Freedom Broker Armenia-ն հանդիսանում է միջազգային ֆինանսական Freedom Holding Corp. հոլդինգի մաս, որի բաժնետոմսերը շրջանառվում են NASDAQ բորսայում (FRHC տիկեր): Հոլդինգի շուկայական կապիտալիզացիան կազմում է 7,5 մլրդ ԱՄՆ դոլար, ակտիվները՝ 12,4 մլրդ դոլար (2026թ. մարտի դրությամբ): Խումբը ներկայացված է ԱՄՆ-ում, Եվրոպայում, ԱՊՀ երկրներում եւ Ասիայում, ունի ավելի քան 11 000 աշխատակից, 233 գրասենյակ եւ ավելի քան 11 մլն օգտատեր թվային էկոհամակարգում:

ԲԱՆԿԵՐ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է

Ֆասթ Բանկն իր Visa քարտապաններին հնարավորություն է տալիս մասնակցել խաղարկության եւ շահել 500 հազար դրամ արժողությամբ 10 դրամական պարգեւներից մեկը: Ֆասթ Բանկի ցանկացած Visa ԱկնՔարտի քարտապան ս.թ. ապրիլի 1-ից մինչեւ մայիսի 31-ը ներառյալ, կատարելով հանրագումարային 10 հազար դրամի անկանխիկ վճարումներ, կստանա 1 պրոմոկոդ եւ հնարավորություն կունենա մասնակցել խաղարկությանը:

Յուրաքանչյուր քարտապան երկու ամսվա ընթացքում կարող է ստանալ մինչեւ 10 պրոմոկոդ, ընդ որում, հաճախորդն արշավին կարող է մասնակցել իր բոլոր Visa ԱկնՔարտերով: Հավելենք նաեւ, որ Ֆասթ Բանկը խաղարկության շրջանակներում իր հաճախորդներին հնարավորություն է տալիս ապրիլի 1-ից 30-ն ընկած ժամանակահատվածում առանց տարեկան սպասարկման վճարի ձեռք բերել Visa Gold ԱկնՔարտ: Այն հաճախորդները, ովքեր արշավի իրականացման ժամանակահատվածում կպատվիրեն նոր Visa վճարահաշվարկային համակարգի որեւէ քարտ, կստանան մեկ լրացուցիչ պրոմոկոդ՝ անկախ նշված ժամանակահատվածում ձեռք բերած քարտերի քանակից:

10 հաջողակները, որոնք կշահեն դրամական պարգեւներից մեկը, կորոշվեն հունիսի 30-ին ժամը 15:00-ին Ֆասթ Բանկի պաշտոնական Youtube-յան էջի ուղիղ եթերում: Հաղթողները կընտրվեն պատահականության սկզբունքով: Խաղարկության արդյունքները կամփոփվեն եւ կհրապարակվեն նաեւ Ֆասթ Բանկի պաշտոնական սոցիալական հարթակներում (LI, FB, Insta): Յուրաքանչյուր քարտապան կարող է շահել միայն մեկ անգամ:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ԲԻԶՆԵՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԱՋԱԿԻՑ

SHADE FURNITURE կահույքի նոր սրահը գործում է Հրազդանում ՝ համադրելով ժամանակակից դիզայնը, տեխնոլոգիական եւ էներգաարդյունավետ լուծումները:

4 հարկ ունեցող շենքն ունի մոտ 4000 քմ մակերես: Նախագծման եւ կառուցման ընթացքում առաջնային են եղել հարմարավետությունը, անվտանգությունը եւ արդյունավետ աշխատանքային միջավայրը, ինչի արդյունքում ձեւավորվել է ոչ միայն մեծ, լուսավոր տարածություն, այլեւ տեխնիկական եւ պահեստային առանձին տարածքներ:

Ծրագրի իրականացմանն աջակցել է Կոնվերս Բանկն իր Converse SME պրոդուկտով: Բանկի աջակցությամբ հնարավոր է եղել ավարտին հասցնել շինարարությունն ու ապահովել ընդլայնված ու հավակնոտ բիզնեսի լիարժեք գործունեությունը:

Սրահն արդեն սպասարկում է հաճախորդների ոչ միայն Կոտայքի մարզից, այլեւ Երեւանից եւ Հայաստանի տարբեր մարզերից:

Սեփականատիրոջ խոսքով, համագործակցությունը ֆինանսական գործընկերոջ հետ շարունակական է լինելու: Արդեն առաջիկայում նախատեսվում է նաեւ բիզնեսի ընդլայնում եւ նոր՝ հարակից ուղղությունների զարգացում:

conversebank.am, 010 511 211

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՆԱԻՐ ՏԻԿՆԻՋՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿՆ Է, ՈՐ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ԽՈՍՔԻՑ ԳՈՐԾԻ ԱՆՑՆԻ

Հայաստանի ազգային հավաքականի դաշտպան Նաիր Տիկնիզյանը «Ցրվենա Զվեզդա»-ի հետ հասել է Եվրոպայի Լիգայի փլեյ-օֆֆ: Metaratings.ru-ին տված հարցազրույցում նա խոսել է ակումբից ու մարզիչ Դեյան Ստանկովիչի հետ հարաբերություններից, կարիերան շարունակելու հեռագա տարբերակներից ու հավաքականի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանի հետ ունեցած տարաձայնությունից:

Հավաքականը

«Ինձ համար մեծ պատիվ է խաղալ Հայաստանի հավաքականում ու ներկայացնել փոքր ազգ, որն ուրախանում է նույնիսկ ամենափոքր հաղթանակներից... Մենք շատ հաճախ չենք հաղթում, բայց երբ ստացվում է, մոլորակի հայերը հպարտություն են զգում, ինչից շատ եմ ուրախանում:

Հիմա ազգային հավաքականի ամենափորձառու խաղացողներից մեկն եմ, ինչի պատճառով պատասխանատվությունս կրկնապատկվում է: Հետեւաբար, կարեւոր է առաջատար լինել խաղադաշտում ու դրա սահմաններից դուրս:

Ազգերի Լիգան

Չեմ ուզում Ազգերի Լիգայում Հայաստանի հավաքականի հնարավորությունների մասին որեւէ բան ասել: Մեզ համար կարեւոր է խոսքից գործին անցնել: Պետք է ամռանը լավ աշխատենք, ապա սեպտեմբերին հավաքվենք ու հստակորեն կատարենք մեր առջեւ դրված խնդիրները: Հավաքականում ամեն խաղ էլ առանցքային է:

Եղիշե Մելիքյանը

Վերջերս հավաքականի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանը ժամանել էր Սերբիա, որպեսզի առաջին հերթին հետեւի իմ խաղին ու տեսնի, թե ինչ մարզավիճակում եմ գտնվում: Խաղից հետո հանդիպեցինք ու 4 ժամ տարբեր ֆուտբոլային հարցերի մասին շփվեցինք: Նորմալ է, որ մինչ այդ որոշակի տարաձայնություններ ենք ունեցել: Նույնիսկ լավ է, երբ նույն հարցի շուրջ մի քանի կարծիք կա: Փառք Աստծո, կարողացանք ընդհանուր հայտարարի գալ: Հիմա որեւէ տարաձայնության մասին նույնիսկ խոսք լինել չի կարող:

Հայ ֆուտբոլիստները

Բնականաբար, հետեւում եմ մյուս հայ ֆուտբոլիստների ու թիմակիցներիս խաղին: Շատ հաճախ եմ նայում Արթուր Միրանյանի ու Էդգար Սեւիկյանի մասնակցությամբ հանդիպումները: Երբեմն նաեւ դիտում եմ Վահան Բիչախչյանի խաղերի վերլուծությունները: Բոլորի խաղն էլ հավանում եմ: Իհարկե, Էդուարդ Սպերցյանը մտերիմ ընկերս է: Նրա հետ վաղուց ենք ծանոթ, դրա համար էլ հավաքականի տղաներից առավել շատ Էդուարդի հետ եմ շփվում:

Պահանջկոտ Ստանկովիչը

Եվրագավաթներում խաղալը, այն էլ մեկնարկային կազմում, մեծ ուրախություն է ինձ համար:

Դեյան Ստանկովիչի պահանջները լիովին համապատասխանում են իմ խաղաոճին: Դրա համար էլ միմյանց այդքան լավ ենք հասկանում: Նա պահանջկոտ մարզիչ է ու նախընտրում է ագրեսիվ եւ դինամիկ ֆուտբոլ:

Ագրեսիվ երկրպագուն

Երբեք ինձ հետ նման բան չէր պատահել: «Նովի Պոզար»-ի հետ գավաթային խաղում գնդակը դուրս եկավ եզրային գծից ու գնացի այն բերելու: Այդ ժամանակ տարօրինակ ձայն լսեցի, որը սովորաբար լինում է, երբ որեւէ մեկը ցանկանում է թքել: Բայց մտածեցի, որ ամեն դեպքում նման բան չի անի: Արդեն մեկ վայրկյան անց, թուքը մազերիս վրա էր: Իհարկե, այդ իրավիճակն ինձ շատ զայրացրեց, իսկ խփած գոլից հետո դրան համապատասխան ձեւով արձագանքեցի:

Բարեբախտաբար, այլեւս նման միջադեպեր չեն եղել: Սերբիայում ագրեսիվ երկրպագուներ չկան, նրանք ավելի շատ անզիջում են: «Ցրվենա Զվեզդա»-ի երկրպագուներն աշխարհի ամենահավատարիմներից ու կրքոտներից են:

Վերադարձը Ռուսաստան

Ինձ համար կարեւորը ֆուտբոլ խաղալն է: Ինչ վերաբերում է Ռուսաստան վերադառնալուն, ապա տեղին չէր լինի հրաժարվել դրանից, բայց ամեն ինչ կախված կլինի հանգամանքներից: Նույնը նաեւ եվրոպական այլ ակումբում հանդես գալու պարագայում է: Ինձ համար առաջնահերթությունը միեւնույն է եվրագավաթներում խաղալն է: Առայժմ «Ցրվենա Զվեզդա»-ի ֆուտբոլիստ եմ, առջեւում մրցաշրջանի վերջին հատվածն է եւ այս պահին միայն դրա մասին եմ մտածում:

Նպատակները

Միակ ցանկությունս հաղթելն է: Երբ մեկնում էի Սերբիա, հստակ գիտեի, թե ինչի հետ եմ բախվելու: Բայց այստեղ շատ լավ մարզադաշտեր կան ու թիմի մեծաքանակ երկրպագուները միշտ ներկա են խաղերին: Նրանք հիանալի մթնոլորտ են ստեղծում, ու մշտապես խաղում ես ծափահարությունների ներքո: Դա շատ բան արժե ինձ համար:

Երկրպագուներն ու բնաադատությունը

Բելգրադում հաճախ են ստորագրություններ խնդրում: Այն մեծ քաղաք չէ, իսկ «Ցրվենա Զվեզդա»-ի երկրպագուները շատ են: Այդ առումով ես բացարձակապես չեմ փոխվել, դեռ չի եղել գոնե մեկ երկրպագու, ում հետ հրաժարվել եմ լուսանկարվել:

Սովորել եմ չարձագանքել սոցկայքերի բացասական մեկնաբանություններին, դրանք լինելու են այնքան ժամանակ, քանի դեռ ֆուտբոլ եմ խաղում: Միշտ էլ դժգոհ մարդիկ են գտնվում: Նման իրավիճակներում լիցքաթափվելու լավագույն տարբերակն ընտանիքիս ու երեխաներիս հետ ժամանակ անցկացնելն է: Դրանից էլ լավ հանգիստ:

Ընտանիք

Բելգրադում հեշտ ենք հարմարվել: Ես ու կինս՝ Յանան, բավականին պարզ մարդիկ ենք: Մենք ժամանակի մեծ մասն անցկացնում ենք տանը: Իհարկե, սիրում ենք ռեստորան գնալ ու ընթրել, բայց ոչ հաճախ, քանի որ մեր որդին՝ Լեոնը, եւս մեզ հետ է: Մեր ողջ ժամանակն անցկացնում ենք փոքրիկի հետ: Երբ երեկոյան քնում է, նոր Յանայի հետ կարող ենք սերիալ դիտել, ընթրել ու միասին ժամանակ անցկացնել:

Բայց ընտանիքս միշտ չի կողքիս: Ժամանակ առ ժամանակ Յանան երեխայի հետ վերադառնում է Մոսկվա: Երբ նրանք կողքիս են, միասին ենք լինում, իսկ երբ մեկնում են, ժամանակիս մեծ մասը հատկացնում եմ ցերեկային քնին ու վերականգնվելուն, ապա գնում երկրորդ մարզմանը»:

ՅՈՒՆԻԲԱՆԿԸ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է

Յունիբանկը հայտարարում է «Հրավիրի՛ր ընկերներիդ եւ ստացի՛ր բոնուս» ռեֆերալ ակցիայի մեկնարկի մասին, որը նախատեսված է աշխատավարձային նախագծի քարտապանների համար:

Ակցիայի համաձայն՝ մինչեւ 2026 թվականի դեկտեմբերի 31-ը Յունիբանկի աշխատավարձային քարտ ձեւակերպած հաճախորդները ստանում են ռեֆերալ կոդ, որը կարող են փոխանցել ընկերներին, գործընկերներին եւ ծանոթներին՝ Յունիբանկում քարտ ձեւակերպելու համար: Յուրաքանչյուր նոր բացված քարտի համար հրավիրող հաճախորդը ստանում է պարգեւավճար՝ 1 000 ՀՀ դրամ բոլոր տեսակի քարտերի եւ 10 000 ՀՀ դրամ՝ Visa Business քարտերի համար:

Ռեֆերալ կոդը հաճախորդին ուղարկվում է SMS հաղորդագրությամբ՝ քարտի համար դիմելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում: Կոդը կարող է տրամադրվել անսահմանափակ թվով անձանց: Պարգեւավճարը փոխանցվում է աշխատավարձային քարտին մինչեւ հաջորդող ամսվա հինգերորդ աշխատանքային օրը:

Աշխատավարձային նախագծերի շրջանակներում Յունիբանկն առաջարկում է անվճար բազմարժութային քարտ, աշխատավարձի մինչեւ 15-ապատիկի չափով վարկային գիծ, անվճար մոբայլ հավելված եւ շուրջօրյա աջակցություն քարտապաններին: Բացի այդ, աշխատավարձային քարտ ունեցող հաճախորդներին տրամադրվում է երեք կուպոն՝ ընտանիքի անդամների համար անվճար քարտ բացելու նպատակով: Բոլոր աշխատավարձային քարտերն անվճար առաքվում են հաճախորդի կողմից նշված հասցեով:

ԼՈՒՐԵՐ

ԵԱ-Ի ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻՑ ԵՆ

Շանթ Սարգսյանն ու Ռոբերտ Հովհաննիսյանը շարունակում են վստահ հանդես գալ շախմատի Եվրոպայի առաջնությունում:

Լեհական Կատովիցեում արդեն կայացել են 3 տուրի պարտիաներ, եւ հայ գրոսմայստերները նույնքան հաղթանակներ ունեն:

Սարգսյանը 3-րդ մրցափուլում հանդիպել է վրացի Նիկոլոզի Կաչարավայի հետ ու սպիտակներով առավելության հասել: Նա լրացուցիչ ցուցանիշներով մրցաշարի առաջատարն է:

Հովհաննիսյանն էլ սեւերով ուժեղ է եղել թուրք Էրայ Կիլիչից ու նույնպես ունի 3 միավոր: Էմին Օհանյանը եւ Հայկ Մարտիրոսյանը 2,5-ական միավոր են վաստակել:

ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Է ԿՆՔԵԼ

Խառը մենամարտերի թեթեւ քաշային կարգում UFC դասակարգման երկրորդ համար Արման Ծառուկյանը (Հայաստան) ֆինանսապես բարելավված պայմաններով նոր պայմանագիր է կնքել լիգայի հետ: Ծառուկյանի հոնորարը կրկնապատկվել է եւ այժմ կազմում է 4 միլիոն դոլար՝ նախկին 2 միլիոնի փոխարեն:

«UFC-ն սկսել է ավելի շատ վճարել Paramount-ի հետ գործարքի շնորհիվ: Ինձ հետ նոր պայմանագիր են կնքել: Եթե նախկինում վճարում էին 2 միլիոն դոլար, այժմ իմ հոնորարը կազմում է 4 միլիոն: Թերեւս, նույն գումարները չեն, ինչ բռնցքամարտում է, բայց 3-4 տարի հետո իրավիճակը կփոխվի»,- Ռայան Գարսիայի հետ հարցազրույցում ասել է Ծառուկյանը:

UFC մարտիկը նաեւ ցանկանում է ռեւանշ մենամարտ անցկացնել BMF չեմպիոն Չարլզ Օլիվեյրային հետ:

«Տոպուրիան արդեն ունի նշանակված մենամարտ: Ես կուզենայի մենամարտել Օլիվեյրայի հետ: Նա 3-րդ համարն է եւ ունի «ամենավտանգավոր» գոտին: Կարծում եմ՝ այդ տիտղոսն ինձ ավելի շատ է համապատասխանում, քան Օլիվեյրային»,- նշել է Ծառուկյանը:

29-ամյա Ծառուկյանը UFC-ում հանդես է գալիս 2019 թ.-ից, MMA-ում ունի 23 հաղթանակ, 3 պարտություն:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում ապրիլի 11-ին՝ ժամը 15:00-ին, կկայանա «Անխելք մարդը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ անել, եթե անձը ոստիկանության բաժնում ենթարկվել է բռնության:

Վազգեն Սիարոնյան, 39 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին մասի՝ խոշտանգում է համարվում պաշտոնատար անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որեւէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաեւ այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որեւէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով: Ընդ որում՝ խոշտանգումներից զերծ լինելու իրավունքը սահմանադրական (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մաս, 23-րդ հոդված, 25-րդ եւ 26-րդ հոդվածներ) եւ կոնվենցիոնալ (ՄԻԵԿ 3-րդ հոդված) մակարդակով պաշտպանվող բացարձակ իրավունք է, այսինքն՝ այն որեւէ դեպքում ենթակա չէ սահմանափակման: Այսինքն՝ խոշտանգումը հանցագործություն է: Անհրաժեշտ է նաեւ ամրագրել, որ ոստիկանությունն ունի հարկադրական բնույթի լիազորությունների իրականացման իրավունք, որը պետք է ուղղված լինի Սահմանադրությամբ եւ օրենքներով հետապնդվող նպատակներին, իսկ դրանց հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ եւ չափավոր:

Եթե ոստիկանության կամ այլ իրավապահ մարմնում Ձեր նկատմամբ բռնություն է կիրառվել, ապա խիստ անհրաժեշտ է ահազանգել անհապաղ, քանի որ ժամանակի ընթացքում ավելի ու ավելի է դժվար լինելու ապացուցել բռնության փաստը: Խիստ կարեւոր է այդ դեպքի մասին իրավապաշտպան կազմակերպություններին (օրինակ՝ ՀՔԱՎ, հեռախոսահամար՝ +374 94 042268 եւ +374 77 032268), փաստաբանին (ՀՊԳ հեռախոսահամար՝ +374 10 600714) եւ/կամ Մարդու իրավունքների պաշտպանին (շուրջօրյա հեռախոսահամար՝ +374 96 116100) դիմելը: Ընդ որում, ՄԻՊ-ին կապվելուց հետո, որպես կանոն, բռնությունները դադարում են: Պետք է հաշվի առնել, որ նման դեպքերում հաճախ ոստիկանության բաժինների տեսախցիկների ու համազգեստի անհատական տեսախցիկների ձայնագրություններն «անհետանում են»: Դրա համար կարեւոր է առավելագույնս հստակ հիշել բռնություն գործադրողներին՝ մտապահելով, թե կոնկրետ ով եւ ինչ տեսակի բռնության էր դիմում: Հակառակ պարագայում, բռնարարները դատարանում մեղքը միմյանց վրա կբարդեն, ու թեեւ պարզ կլինի, որ իրենցից մեկն է գործադրել բռնությունը, սակայն հնարավոր չի լինի անհատականացնել մեղքը, ինչի հետեւանքով բռնարարները կարող են չենթարկվել որեւէ պատասխանատվության:

(շարունակությունը՝ հաջորդ համարում)

ՀՀ ոստիկանություն

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Լրագրողը տեսանկարահանում է ինձ, սակայն ես չեմ ցանկանում: Դա օրինակա՞ն է:

Վազգեն Ալոյան, 42 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Լրատվական գործունեություն իրականացնողները եւ լրագրողները, իրենց մասնագիտությունից ելնելով, պետք է գործեն ազատորեն, անկաշկանդ, պետք է առաջնորդվեն խոսքի (արտահայտվելու) ազատության եւ բազմակարծության սկզբունքներով՝ պահպանելով ՀՀ օրսնդրությունը: Ավելին, լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում ունի մի շարք երաշխիքներ ՀՀ օրենսդրությամբ:

Սակայն կան նաեւ բացառություններ, երբ, օրինակ, լրագրողի ազատ գործելու իրավունքը կարող է խախտել այլ անձանց մասնավոր կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը կամ հանգեցնել օրենքի այլ խախտումների:

Օրենքում հստակ ամրագրված է, որ արգելվում է օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաեւ այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը:

Ավելին, արգելվում է տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության տարածումը, եթե դա ստացվել է տեսաձայնագրման կատարման մասին առանց անձին զգուշացնելու, եւ այդ անձն ակնկալել է, որ գտնվում է տեսաձայնագրումը կատարողի տեսադաշտից դուրս, լսելի չէ նրա համար, եւ դրա համար ձեռնարկել է բավարար միջոցներ: Այս կանոնից բացառություն են կազմում այն դեպքերը, երբ տեսաձայնագրումը կատարած անձի՝ տեսադաշտից դուրս լինելու կամ նրա համար լսելի չլինելու համար ձեռնարկված միջոցներն ակնհայտորեն անբավարար են եղել:

Այսինքն՝ եթե Դուք տեսնում եք, որ լրագրողը տեսնկարահանում է Ձեզ, եւ Դուք դա չեք ցանկանում, ապա պետք է ողջամիտ եւ անհրաժեշտ քայլեր կատարել՝ նրա տեսադաշտից դուրս գալու, լրագրողից հեռանալու համար:

(շարունակությունը՝ հաջորդ համարում)

Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Շղթայական ավտովթար Երեւանում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 1 + 3 + 6 + 10
	Կոտայքի լեռներ	0 + 3 + 7 + 10
	Կոտայքի նախալեռներ	+ 4 + 7 +10 + 13
	Գեղարքունիք	0 + 4 + 7 + 10
	Լոռի	+ 1 + 4 + 7 + 11
	Տավուշ	0 + 3 + 8 + 11
	Արագածոտնի լեռներ	- 1 + 2 + 4 + 7
	Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 7 + 9 + 14

	Արարատ	+ 6 + 9 +13 + 16
	Արմավիր	+ 5 + 8 +13 + 16
	Վայոց ձորի լեռներ	+ 7 + 10 +14 + 17
	Վայոց ձորի նախալեռներ	+ 7 + 11 +14 + 17
	Սյունիքի լեռներ	- 2 + 2 + 6 + 9
	Սյունիքի նախալեռներ	+ 1 + 4 +13 + 16
	Սյունիքի հովիտներ	+ 6 + 10 +19 + 23
	Երեւան	+ 5 + 7 +15 +17

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.04.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*